«ԱՐՄՈՆԻՏՈՐ» ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, հասցե՝ ք.Երևան, Իսրայելյան փ 37, բն 32

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

Ա. Ջավադյանին

Հարգելի պարոն Ջավադյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք մեզ տրամադրել տեղեկություններ ներքոնշյալ հարցադրումների վերաբերյալ .

Հաշվի առնելով ռուսական "Տրոյկա Դիալոգ" բանկի և վերջինիս նախկին սեփականատեր Ռուբեն Վարդանյանի անունների հետ կապված, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ-ից դուրս ընթացող հետաքննությունների և բացահայտումների արդյունքում հնարավոր պատժամիջոցների կիրառումը նշված անձանց նկատմամբ՝ հանրությանը պատշաճ իրազեկելու նպատակով խնդրում ենք ձեր պարզաբանումները ստորև շարադրված հարցերին.

1. ՀՀ ԿԲ կողմից գնահատվե՞լ է արդյոք հավանական պատժամիջոցների կիրառումը ՀՀ տնտեսության վրա և մասնավորապես Ռուբեն Վարդանյանի մասնակցությամբ բիզնես և սոցիալական ծրագրերի վրա:

2. ՀՀ ԿԲ կողմից հարցում արվե՞լ է ՌԴ Կենտրոնական բանկին "Տրոյկա Դիալոգ"-ի հետ կապված կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների մասով:

3. ՀՀ ԿԲ կողմից ստուգվե՞լ է արդյոք հայկական "Ամերիաբանկի" ներգրավվածությունը ՁԼՄներում, մասնավորապես հետևյալ հոդվածներում. https://hetq.am/hy/article/101451 , https://www.occrp.org/en/troikalaundromat/ նշված գործարքներին:

4. ՀՀ ԿԲ կողմից գնահատվե՞լ են արդյոք "Ամերիբանկի" նկատմամբ պատժամիջոցների կիրառման հավանականությունը, չափը՝ հաշվի առնելով, որ վերջինիս ամենախոշոր նշանակալի մասնակցություն ունեցող անձը Ռուբեն Վարդանյանն է:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում՝ բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել

մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը: (Պատրաստ ենք վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալություն

"ԱրՄոնիտոր" հանրային վերահսկողական միավորում

Հասարակական կազմակերպության համահիմնադիր

Ա. Ավետիսյան

05 ապրիլի 2019թ